

զի մեզ հրաման ետ եւ ասէ. «Թէ հաւանին արեգական եւ կրակի երկիր պագանել, եւ զմեր արեւնս յանձն առնուն պաշտել՝ սոցա զմահապարտութիւնն թողում, զազատորեարսն զոր կապեալ է՝ արձակեմ ի Հայս, եւ զիւրաքանչիւր ուրուք զտանուտերութիւն տամ եւ զգահ եւ զպատիւ»: 9 Արդ՝ դուք յիշեցէ՛ք ե՛ւ զձեր անձինսդ զմտաւ ածել եւ զայնչափ կապելոց զոգիս որք ի բանտին էին, եւ [զի] զհրամանն արքայից արքայի կամաւ եւ ախորժելով յանձն առէք. եւ որպէս եղէք պատճառք բազում արեանց՝ լերո՛ւք այժմ պատճառք բազմաց կենդանութեան: 10 Ապա թէ ոչ առնուք յանձն, եւ տակաւին ի նմին ապշութեան յամառեալ կեայք՝ դուք մեռանիք, եւ զնոսա հրամայէ սպանանել. եւ ամենայն արիւնքն որ յառաջն հեղան եւ որ այժմ հեղոց են՝ ի ձեր յոգւոց ինդրին յաստուածոց»: 11 Եւ զայս ամենայն բանս խաւսեցաւ Վեհդենշապուհ հանդերձ ընկերաւքն իւրովք ընդ սուրբսն:

12 Հրաման տային երանելոյն Սահակայ եպիսկոպոսին՝ թարգմանել սրբոյն Յովսէփայ եւ սրբոյն Ղեւոնդի եւ այլոց ընկերակցացն. քանզի սուրբ եպիսկոպոսն միայն գիտեր պարսկերէն, եւ այլ ոք ի սրբոցն ոչ գիտեր: 13 Ուրոյ անդրէն պատասխանի արարեալ սրբոյ եպիսկոպոսին Սահակայ՝ ասէ ցԴենշապուհ եւ ցայլսն որ նստեին ընդ նմա. «Մի՛ տայք ինչ, ասէ, ասել ցորոսա բանս, որ ոչ են արժանի սոցա լսողութեան. վասն զի խաւսք, որ ինձ ատելի թուին եւ արժանի ծաղու, զի՞ եւս ասեմ ցնոսա, զոր գիտեմ թէ իբրեւ լսեն՝ եւ զձեզ եւ զյղելիսն ի միասին անգոսնեն²: 14 Արարէ՛ք զինչ եւ կամիք, եւ մի՛ յերկարեալ խաւսիք ընդ մեզ բանս մնոտիս եւ պատգամս ընդունայնս»:

15 Եւ սրտմտեալ Դենշապիոյ եւ այլոցն՝ ասեն ցսուրբն. «Դու հարկաւորութեամբ ասա՛ ցորոսա. թող գիտասցուք եւ զդոսա խաւսս³ եւ զկամս»: 16 Եւ սրբոյ եպիսկոպոսին կարճառատիւ զբանսն եւ զպատգամս թագաւորին ասացեալ ցսուրբ ընկերակիցսն⁴ իւր, եւ սրբոցն լուեալ՝ մեծաձայն ծաղու անգոսնեցին զբանիւքն. զոր եւ իմացեալ անաւրէն իշխանացն՝ առաւելապէս զայրացան: 17 Սակայն պատասխանի տուեալ սրբոյ կաթողիկոսին Յովսէփայ՝ ասէ, թէ «Եղէւ հարցումնդ⁵ այդ ատենաւ ի դրան առաջի հազարապետին Արեաց Միհրներսեհի, եւ լուեալ ի մենջ զբանս մեր եւ զկամս, զոր եւ թագաւորին գիտել ետ: 18 Նոյն են մեր ամենեցուն կամք եւ բանք, եւ ոչ փոփոխեմք զբանս մեր, որպէս երբեմն խաւացեալք իբրեւ զանխորհուրդս՝ եւ այժմ զոջացեալ ապաշաւեմք իբրեւ զվնասակարս: 19 Այս եւեթ խորհուրդ

1 SS. որ կապեալ է

2 Ձ. անկոսնեն

3 SS. զխոսս

4 Ձ. ցընկերակիցսն

5 SS. հարցումդ